ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՇ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Մինոդի, որով պատուիրեցաւ կարդադրել զռոճկագրամս Գարեգին և Իսահակ վարդապետաց։ Հմար 307.

— Յանուն Խաչիկ վարդապետի, որով հաստատի վանահայր ս. Զուարթնոց եկեղեցւոյ։ Հ. 313.

— Յանուն առաջնորդին Հայոց որ յԱմերիկայ, Տ. Յովսէփ արքեպիսկոպոսի, որով պատուիրի տալ առնել ընտրութիւն նորոյ առաջնորդի յաղագս հրաժարելոյ նորին ի պաշտամանէն։ Հ. 318.

— Յանուն Երևանայ Կոնսիստորիային յաղագս տալոյ Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսի 100 ր. փոխարինաբար։ Հ. 320.

— Յանուն Առաջնորդին Վրաստանի, որով պատուիրի տալ Ստեփան և Զաքարիա վարդապետաց զ100-ական ռուբլիս։ Հ. 326.

— Յանուն պատրիարքին Կ. Պոլսոյ, որով պատուիրի առաքել ի Մ. Ամթոռ զգանձանակեալ դրամս յանուն Ս. Էջմիածնի։ Հ. 327.

— Յանուն հոգ. կառավարութեան Աղեքսանդրապոլոյ, որով պատուիրի տալ զկէս մասն արդեանց մոմավաճառութեան ս. Կիւրակէ ուխտատեղւոյն՝ դպրոցին Մեծ Ղարաքիլիսէ գեղջ։ Հ. 328.

— Ցանուն Տ. Սարգիս եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել ի քահանայ զԳաբրիել Թոփալեան Փոքր Սալայ գեղջ. Հ. 329.

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով առաջադրի արձակել զփաստաբան Գարեգին Ենդիբարեան ի պաշտամանէ. Հ. 350.

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրի կարգել զԱնտոն վարդ. օգնական վանահօրն Երնջակայ, նշանակելով նմա հանդերձագին զ30 ր. յամիսն ի 1-էն յունվ. տարւոյս. Հ. 370.

Բ.

Հայրապետական զոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ յանուն Գանձակեցի Աննայի Բալուղեանց վասն նուիրաբերելոյ գաւազան արծաթալուխ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն, որ ի Գանձակ. Հ. 349.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ յանուն Ներսէս վարդապետի Խապայեան առաջնորդին Վանայ, որով շնորհի նմա իրաւունք կրելոյ լանջախաչ. Հ. 368.

Մակագրութիւնք

Ի խնդրագրի Մկրտիչ սարկաւագի. «Ցանձնեմք վարչութեան ճեմարանին, հրահանգելով փութացուցանել զորոշումն ուսուցչական ժողովոյն այնորիկ խնդրոյ». Հ. 298.

Ի յայտարարութեան փոխ. Հին-Նախիջեւանի Տ. Լեւոն վարդապետի, «Պատուիրեմք կառուցանել կրպակս և տալ

տեղեկութիւն Մինոդին և Կոնսիստորիային զկնի աւարտման գործոյն»։ Հ. 337.

Ի խնդրագրի ատենադպրի Կոնսիստորիային Երևանայ. «Նշանակեմք զ1100 բուբլի ռոճիկ՝ վասն պաշտաման ատենադպրութեան և թարգմանի ցկազմումն նորոյ շտատի»։ Հ. 323.

Ի խնդրագրի Կարապետի Աբրահամեան. «Համարելով իրականապէս զպակն լուծեալ՝ թոյլատրեմք մտանել խնդրատուին ի նոր ամուսնութիւն»։ Հ. 356.

Ցանուն Կոնսիստորիային Երևանայ, որով պատուիրեցաւ տալ Թադէոս վարդապետի Տ. Նիկողայոսեան յամիսն 12 բուբլիս թոշակ ի վիճակային արդեանցն ի 1-էն յունուարի այսր ամի։ Հ. 384.

Ցանուն Մինոդի Ս. Էջմիածնի, որով ծանուցաւ յանձնել զդրամս ծախուց վերհարանիս՝ Վահանայ Խրիմեան։ Հ. 385.

ԳԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՄԻՆՈԴԻ

Ի 16-ն փետրուարի ըստ կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի Մինոդն հրամայեաց կառավարչի կալուածոց Մայր Աթոռոյ, որ ի Տփխիս, հատուցանել պ. Սեդրաքայ Մանդինեանի զ500 ր. կենսաթոշակ նորին յարդեանց կալուածոց Մ. Աթոռոյ։ Համար 128.

Ի նմին թուի Մինոդն մերժեաց զմիջնորդութիւն Կոնսիստորիային Երևանայ՝ վասն ձեռնադրելոյ զՑարութիւն Յովհաննիսեան ի քահանայ Իլլի-Ղարաքիլիսա գեղջ ի պատճառս թերուսդոլոյ ընծայացուին։ Հ. 132.

Ի նմին թուի Մինոդն հրամայեաց առաջադրել փոխ թեմական Երևանայ յորդոր կարդալ ժողովրդեան Մաղրա